
**ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Հ. ՇԻՐԱՊԻ ԵՎ Պ. ՄԵՎԱԿԻ՝ Մ. ՄԱՇՏՈՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՊՈԵՄՆԵՐՈՒՄ**

ՏԵՐ - ՄԻՆԱՍՅԱՆ Ա. Ա.

1962-ին մեծ շուքով նշվում է հայոց գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի 1600-ամյակը: Կազմակերպվում են բազմաթիվ մեծ ու փոքր միջոցառումներ: Նույն թվականի մայիսին կայանում է նաև կառավարական պաշտոնական հանդիսություն, որտեղ գեկուցումով հանդես է գալիս Պարույր Սևակը: Հայկական մամուլը (այդ թվում՝ սփյուռքահայ) տպագրում է Մաշտոցին, հայ գրերին ու հայոց լեզվին նվիրված բազմաթիվ հոդվածներ, գրական ստեղծագործություններ: Հայ բանաստեղծները, օգտվելով բարեպատեհ առիթից, այդ թեմայով գրված շատ երկերում փորձում են արծարծել նաև հայ ժողովրդին հուզող, նրա ներկային ու ապագային վերաբերող բազմաթիվ հարցեր: Պոեզիան նրբորեն քաղաքականացվում է, քաղաքականացվում է նաև Մեսրոպ Մաշտոցի կերպարը, գրերի գյուտը գնահատվում է որպես քաղաքական սխրանք, ավելին, քան ազգային-ազատագրական հերոսամարտերն են: Բնականաբար, արդիական են դառնում ազգապահպան գաղափարները, որոնք վերագարթոնքի ծիլեր էին տվել դեռևս 50-ական թթ. կեսերից:

Մաշտոցին նվիրված երկերից ժողովուրդը հատկապես մեծ ոգևորությամբ է ընդունում Պարույր Սևակի «Եվ այր մի՛ Մաշտոց անուն...» և Հովհաննես Շիրազի «Հայոց հրաշքը» պոեմները, որոնք արտասանվում են տարբեր բեմերից:

Գրապատմական այս իրողությունների օբյեկտիվ հիմնավորումներից է գրականագետ Սամվել Մուրադյանի «Մեսրոպ Մաշտոցը՝ Հովհաննես Շիրազի և Պարույր Սևակի հայացքով» հոդվածը, որտեղ դիպուկ ասված է, որ այս բանաստեղծները՝ «յուրաքանչյուրը յուրովի, միմյանցից բոլորովին անկախ՝ վերախմաստավորեցին ու բանաստեղծականացրին Մաշտոցին, կերտեցին նրա լուսավոր կերպարը՝ նրա հոբելյանը դարձնելով ժամանակակից հայությանը հուզող ազգային, պատմական, քաղաքական ու բարոյական խնդիրներն արծարծելու հարմարագույն շարժառիթն ու միջոցը, ստեղծեցին պոեմներ, որոնք կարևոր ուղենիշ եղան հայ սերունդների ազգային ինքնաճանաչման, քաղաքական զարթոնքի ու մտավոր վերելքի ճանապարհին»¹:

Գրեթե միաժամանակ տպագրված այս երկու պոեմների՝ թեմայից բխող ընդհանուր կողմերն ակնհայտ են: Երկուսում էլ գլխավոր հերոսը Մաշտոցն է, երկուսում էլ փառաբանվում են նրա սխրանքը, հայոց անկրկնելի գրերը, մայրենի լեզուն, փորձ է արվում նորովի վերախմաստավորելու V դ. պատմական

¹ Մուրադյան Ա., Գրական հանգրվաններ, գիրք Ա, Ե., 2003, էջ 413:

իրադարձությունները, ցույց տալու հայ գրերի ստեղծման վիթխարի նշանակությունը և՛ տվյալ պատմական ժամանակահատվածի, և՛ հետագա բոլոր դարերի համար: Մեսրոպյան գրերը ամենից հաճախ համեմատվում են ազգապահպան գործի կամ զենքի հետ, իսկ նրանց արարողը՝ մեծ զորավարի:

Պատյան չունի՝ Թուր – կեծակի հայոց լեզուն այբբենաթուր...
... Մի այնպիսի գործ ծնեցիր,
Որ ոչ մի պահ չի տրոհվում,
Ոչ մի զինվորդ չի զոհվում ...
... Ամեն տառդ հայ ազգապահ մի զինվոր է անմեռական,
Ամեն բառդ՝ հայոց մի գունդ, այբուբենդ՝ բանակն Հայկյան ...
... Ո՛վ դու՝ անզույգ մեր զորավար, արյուն չկա քո նիզակին ...
... Ո՛վ ուսուցիչ, ո՛վ ազգապահ, ով զորավար Այբբենաթուր...²:
 Հ. Շիրազ

Եվ նա էր ահա, որ ձևավորեց
Մի զենք ժանգախույս,
Եվ ծովավորեց
Ասպարեզ մի նոր ...
... Այն, ինչ որ անել չկարողացան
Արշակ-Վաղարշակ,
Մուշեղ ու Մուշե,
Սա՛ արեց միայն՝ անզեն ու անզորք...³:
 Պ. Սևակ

Երկու պոեմներում էլ նշվում է, թե շատ ցեղեր ու ժողովուրդներ դարերի ընթացքում կորցրին իրենց ինքնությունը կամ ոչնչացան, մինչդեռ հայ ժողովուրդը դիմացավ դարավոր ծանր պայքարում՝ առաջին հերթին շնորհիվ հենց մեսրոպյան գրերի:

Այն դարերում, երբ յոթնացեղ ասորիքներ անհետ կորան,
Դու չթողիր հայը կորչի, ո՛վ աստրծո այբբենարան ... (170):
 Հ. Շիրազ

Եվ հիմա արդեն այդ մե՛զ չեն պեղում.
Այլ մենք ենք պեղում.
Այդ մե՛զ չեն հիշում,
Այլ մենք ենք հիշում.
Մե՛զ չեն վկայում,
Մենք ենք վկայում ... (263):
 Պ. Սևակ

² Հ. Շիրազ, Երկեր, հ. 2, Ե., 1982, էջ 166-171: Այսուհետև պոեմից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:

³ Պ. Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 4, Ե., 1973, էջ 257 - 260: Պոեմից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:

Սակայն թեմայից բխող այս ընդհանրություններից բացի, բնական է, որ նշված պոեմներում առկա են նաև բազմաթիվ առանձնահատկություններ (սյուժետային, տաղաչափական, պատկերային և այլն), որոնցից էականը աշխարհայացքայինն է: Ընդ որում, գլխավոր հերոսի՝ Մաշտոցի անձի և գործունեության գնահատման հարցերում հեղինակները հիմնականում միակարծիք են՝ բացառիկ դեր վերապահելով Մեսրոպ Մաշտոցին՝ մեր ժողովրդի ինքնության և ազգապահպանության իմաստով:

*Երբ ասում ենք Մեսրոպ Մաշտոց՝ հայոց լեզուն ենք հասկանում,
Քանզի քեզնով հայ մնացինք, քանզի քեզնով ենք ազգանում,
Քեզնով զինված էին հաղթում անթագակիր դարերն հայոց ... (170):*

Հ. Շիրազ

*Եվ մենք՝ նրանով միշտ զինավառված ...
... Մնվեք չլրելով զարկեր ու հարված ...
... Հաղթեցինք դաժան ժամանակներին ... (263):*

Պ. Սևակ

Երկու պոեմներում էլ գլխավոր հերոսի կերպարին զուգահեռ վարպետորեն տիպականացված է նաև երկրորդ գլխավոր հերոսի՝ հայ ժողովրդի հավաքական կերպարը: Եվ Շիրազի, և՛ Սևակի պոեմների շատ հատվածներում այս գլխավոր կերպարները նույնանում են, քանզի ազգի մեծերն են, որ իրենց սխրագործություններով ու դրանց շուրջ հյուսված լեգենդներով կերտում-ամբողջականացնում են սեփական ժողովրդի հավաքական կերպարը: Եվ ժողովրդի մեծ գավակ կոչվելու իրավունքը նա ունի, ով ծնվելով այդ ժողովրդից և դառնալով նրա իդձերն իրականացնողը, միաժամանակ կատարում է անկարելին. դառնում է սպասվածից ավելի մեծ, այնքան մեծ, որ սերունդները դաստիարակվում են նրա ոգով, ձգտում նմանվել նրան: Այսինքն՝ իր մեծ գավակների գործերով է ժողովուրդը վերարտադրում ու ամբողջականացնում իր հավաքական կերպարը:

Ուրեմն՝ գրել պատմականորեն հայտնի անհատների մասին, նշանակում է նաև տալ դարաշրջանի բնութագիրը, նշել ժողովրդին հուզող խնդիրները, արտացոլել նրա մտածելակերպի ու բարոյական նկարագրի առանձնահատկությունները: Սակայն պոեմներում ավելի մեծ ծավալ են կազմում այն հատվածները, որոնցում Մաշտոցի կերպարը հստակ տարանջատված է, նույնիսկ որոշ դեպքերում հակադրված է ժողովրդի հավաքական կերպարին: Ահա այստեղ է, որ էապես տարբերվում են երկու հանճարեղ բանաստեղծների՝ Շիրազի և Սևակի աշխարհայացքային ըմբռնումները:

Նախ՝ «Հայոց հրաշքը» պոեմի մասին: Ըստ Շիրազի՝ գրերի գյուտին նախորդող տարիներին հայ ժողովուրդը տակավին «ցեղ էր վայրի», որին «աստվածային հրաշքով» Մաշտոցը գիր պարգևեց, որպեսզի դրանք «ազգի փոխեն ցեղը վայրի»:

*... Կանթեղի պես քեզ վառելով,
Երկրե երկիր թափառելով՝*

Փնտրում էիր հրաշքն հայոց...
 ... Դու աստծուց աղերսեցիր հայոց գրերն ու ... ցած բերիր ...
 ... Որ հար մնան, որ գրքերում արև մնան անմարելի,
 Կաղապարեն ցեղի ուղեղն՝ ազգի փոխեն ցեղը վայրի ...
 ... Եվ նիշ առ նիշ երկնում էիր, և նիշ առ նիշ հրաշքն հառնում՝
 Ազատաբեր գիր էր դառնում՝ բռնում կոկորդն ազգի ձուլման ...
 ... Երբ հեղեղն էր վիշտը հայոց, երբ դեռ հայր ցեղ էր վայրի,
 Գլխում մտքի կանթեղով էլ գուրերն ուներ մութ քարայրի:
 Բայց դու մութը դուրս վանեցիր ...
 ... Այրաբնակ վայրի էինք՝ ուղեղ տվիր մեզ աստծու ... (167–170):

Հետաքրքիր է, որ այս պոեմը գրելուց և՛ առաջ, և՛ հետո Շիրազը չի գրել ուրիշ որևէ գործ, որը հայ ժողովրդի մինչամաշտոցյան շրջանի մասին նման կարծիք պարունակի: Ընդհակառակը, բանաստեղծը մեծ ոգևորությամբ գովերգում է Արա Գեղեցիկի, Մասիսում շղթայված Արտավազդ արքայի և հատկապես Տիգրան Մեծի սըխրանքները՝ նրանց մեծարելով «իմաստուն», «անմահ զորավար», «արևազնյա» և նման բառերով:

... Բայց իմաստության ձյունի տակ մնաց
 Զայրույթի լավան արքայի մեր մեծ ... (185):
 ... Բայց սանձը կտրեց՝ իմաստնեց արքան ...
 ... Քաշեց պատյանից կայծակն ահարկու.
 Բայց իմաստությամբ հայամեծ ոգու՝
 Ժպտալով սուրբ դրեց պատյանը ... (186):
 Հեթանոս արքան իմ արևազնյա
 Ետ իլեց բոլոր սարերն իր Մասնա ... (198):

Այս մեջբերումները «Տիգրան Մեծի վիշտը և հավերժությունը» պոեմից են, որի մեջ հայոց հեթանոսական մշակույթը ևս Շիրազի կողմից արժանանում է շքեղ դրվատանքների: Օրինակ, թափառական գուսանի խորիմաստ մեղեդու մասին Տիգրան Մեծն ասում է.

– Մոայլ մեղեդին այս իմաստունի ...
 ... Մատյանն էր հայոց ճակատագրի ...
 ... Տեսա երգի մեջ ես հրաշք մի բան ...
 Բայց ես այս երգի մեծախոհ ծովում,
 Անբառ խորհրդում այս գուսանների ... (183 - 184):
 ... Այս էր սուրբ խորհուրդն այս անբառ երգի,
 Այս է բարբառը մեր հավերժության ... (191):

Հայոց հեթանոս ժամանակների ոգեղեն արժեքների բարձր գնահատման փաստերն այնքան շատ են Շիրազի տարբեր ստեղծագործություններում, որ դրանց մեջբերումներով հարկ չկա ծանրաբեռնել նյութը:

Բնականաբար, հարց է առաջանում. ինչո՞ւ «Հայոց հրաշք» պոեմում Շիրազն հանկարծ այդքան անարդար է դառնում իր ժողովրդի փառահեղ անցյալի հանդեպ՝ հակասության մեջ մտնելով ոչ միայն պատմական փաստերի, այլև իր իսկ աշխարհայացքի հետ: Այս տարօրինակ թվացող երևույթի հիմքերն ըմբռնելու համար նախ նշենք, որ Շիրազի պատմահայրենասիրական քնարերգության մեջ ամենից հաճախ հանդիպող հերոսների շարքում տասնամյակներ շարունակ առանձնացել է հատկապես Մեսրոպ Մաշտոցի կերպարը, որինն վիրված բազմաթիվ բանաստեղծություններից բացի, մեծ քանակ են կազմում նաև այլ թեմաներով գրված երկերը, որոնցում ևս հեղինակը անդրադարձել է մայրենի լեզվին, հայոց գրերին: Ավելացնենք, որ մեր և հատկապես գրականագետ Սամվել Մուրադյանի խնդրանքով բանաստեղծի դուստրը՝ Անի Շիրազը, «Հայոց հրաշքը» պոեմի ստեղծման տարեթիվը ճշգրտելու նպատակով (ցավոք՝ ապարդյուն) երկար պրպտումներից հետո Շիրազի անտիպ ձեռագրերի մեջ գտել է Մեսրոպ Մաշտոցին նվիրված մի փոքրածավալ պոեմ, որի տակ Շիրազի ձեռքով նշված է տարեթիվը՝ 1940 թ.: Փաստ, որը մեկ անգամ ևս հաստատում է, որ Շիրազին երբեք չի լքել մաշտոցյան հրաշքը փառաբանելու ոգևորությունը, և որ Մաշտոցի 1600-ամյակը պարզապես առիթ է դարձել մի նոր ժայթքման, որն առավել մոռումնենտալ է, քան նույն թեմայով գրված նախորդ գործերն են:

Հայտնի է նաև, որ հայրենապաշտ բանաստեղծի համար նյութական հայրենիքից ավելի արժեքավորվում է ոգեղեն հայրենիքը, որի խորհրդանիշը նրա պոեզիայում, որպես կանոն, դարձյալ «այբբենաթուր» հայոց լեզուն է, հայոց գրերը և Մեսրոպ Մաշտոցը: Պատահական չէ, որ Շիրազի կողմից այնքան կարոտով ու սիրով երգված Մասիսն անգամ ընդամենը պատվանդան է հայ գրերի «գորաստեղծ», «հայոց միակ արքա» Մաշտոցի համար.

*Ո՛վ ազգապաշտ, չի դամբանվի երախտիքը քո եռածով,
Մոռումենտը քեզ է վայել, բայց Մասիսի պատվանդանով (173):*

Այսինքն, Շիրազը ստեղծագործական ոչ մի փուլում երբեք ոչ մի չափազանցության առջև կանգ չի առել՝ փառաբանելու «թուր կեծակի» հայոց լեզուն ու հայ գրերի ստեղծողին: Եվ «Հայոց հրաշքը» պոեմը, ըստ էության, ո՛չ բացառություն է, ո՛չ էլ աշխարհայացքային փոփոխություն: Հավանաբար, այս անգամ ևս գլխավոր հերոսի կերպարի կատարելությանը հասնելու ձգտումն այնքան տիրապետող է եղել, որ բանաստեղծը գիտակցաբար «մեղանչել է» պատմական փաստերի դեմ՝ հանուն առավել ընդհանրական երևույթի տիպականացման:

Շիրազի այս ստեղծագործության աշխարհայացքային կայունության օգտին է խոսում նաև այն փաստը, որ հավանաբար մեկ շնչով գրված և հորեյանական օրերին տպագրության հանձնված պոեմի հետագա վերահրատարակությունների ժամանակ, ճիշտ է, շտկել է որոշ վրիպումներ, բայց գործի գաղափարական

ամբողջականությունը պահպանել է անփոփոխ: Եվ դա այն դեպքում, երբ Շիրազը վերահրատարակելիս բժախնդրորեն վերամշակել է իր շատ ստեղծագործություններ՝ զգալիորեն փոփոխելով հատկապես երկի գաղափարական բովանդակությունը, նույնիսկ եթե դրանից տուժել է նախնական տարբերակի քնարականությունը (վկա՝ «Միամանթո և Խջեզարե» պոեմի բազմաթիվ վերահրատարակությունները):

Մինչև Սևակի «Եվ այր մի՝ Մաշտոց անուն...» պոեմի աշխարհայացքային առանձնահատկություններին անդրադառնալը կարևոր է ճշտել, թե երբ է գրվել «Հայոց հրաշքը», քանի որ միայն այդ դեպքում կարելի է խոսել հնարավոր բանավեճի գոյության մասին: Ցավոք, այս հարցին միանշանակ պատասխանել հնարավոր չէ, քանի որ հայտնի է միայն, որ պոեմի մի հատված առաջին անգամ տպագրվել է 1962 թ. մայիսի 26-ին («Գրական թերթ, № 21»), իսկ ամբողջովին՝ Բեյրութում հրատարակվող «Շիրակ» հանդեսի նույն թվականի 8-րդ համարում (էջ 346-353): Սակայն ո՛չ այս դեպքերում, ո՛չ էլ հետագայում վերահրատարակելիս հեղինակը ամսաթիվ կամ տարեթիվ չի նշել: Կասկածից վեր է, սակայն, որ «Հայոց հրաշքը»՝ որպես ամբողջական պոեմ (չի բացառվում, որ որոշ հատվածներ գրված լինեն ավելի վաղ), գրվել է 1961-1962 թթ.՝ Մաշտոցի 1600-ամյակի տոնակատարության օրերին: Հայտնի է, որ Շիրազն իր նոր գործերից շատերը նախ կարդում էր տարբեր հանդիսությունների և հանդիպումների ժամանակ և հետո միայն հանձնում տպագրության⁴:

«Հայոց հրաշքի» 1961-ի վերջին կամ 1962-ի սկզբին գրված լինելու օգտին է ոչ միայն «նոր թխած, դեռևս տաք» լավաշի հետ հեղինակի կատարած համեմատությունը, այլև այն, որ հավանաբար մեկ շնչով գրված պոեմի առաջին տպագրության մեջ կան վրիպումներ, որոնք անփութության և շտապողականության արդյունք են: Այդպիսի վրիպումներից է, օրինակ, V դ. մասին պատմող պոեմում «իսլամագուն գրեր» արտահայտության գործածությունը (*«Երբ գիր չուներ հայոց լեզուն՝ գրերի մեջ իսլամագուն ...»*)⁵:

⁴ Մեր խնդրանքով Մաշտոցի հոբելյանական հանդիսություններից մեկին մասնակցած բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Մաղալյանը սիրով տրամադրեց իր գրառումներից մեկը, որում պատմվում է Շիրազի կողմից «Հայոց հրաշք» պոեմի առաջին ընթերցումներից մեկը՝ Հայֆիլիարմոնիայի փոքր դահլիճում: «Ինչը օր շիկացած թոնրեն նոր հանած հացը՝ բերանդ ու լեզուդ վառվոթելով ուտես ու համն ու բույրը չես զգա, բայց քիչըմ անցնելեն, բերանդ հովանալեն հետև կառնես էնոր համը, էնպես էլ իմ այս պոեմս է: Նորնոր եմ հանել շիկացած թոնրեն, շատ է տաք, հիմա, որ կարդամ, երևի բերաններդ վառե, էնոր համը չզգաք, բայց մի քիչ անցնելեն հետև կզգաք էնոր համն ու հոտը», - ասել է Շիրազը:

⁵ **Շիրազ Հ.**, Քնար Հայաստանի, գիրք 2, Ե., 1964, էջ 220:

Հետագայում պոեմը վերահրատարակելիս հեղինակը «խալամագուն» բառը փոխեց «օտարագուն»- ով (4 - 166): Բերված փաստերից, թվում է, կարելի է եզրակացնել, որ «Հայոց հրաշքը» գրվել է 1962-ի գարնանը, այսինքն՝ «Եվ այր մի՛ Մաշտոց անուն...» պոեմից հետո, որը Սևակը թվագրել է 1962 թ. փետրվար: Սակայն Սևակի պոեմում կան բանավեճ հիշեցնող հատվածներ, որոնք հակառակ կարծիքն ունենալու հիմքեր են տալիս. այն է՝ «Հայոց հրաշքը» ոչ թե հաջորդել, այլ նախորդել է «Եվ այր մի՛ Մաշտոց անուն...» պոեմին, և Սևակը իր երկը գրելուց առաջ արդեն ծանոթ է եղել (հավանաբար բանավոր ասմունքներից) Շիրազի պոեմին: Մինչև այդ հիմքերին անդրադառնալը նշենք, որ ինչպես Շիրազի, այնպես էլ Սևակի համար մաշտոցյան թեմայով գործ գրելը պատահականություն չէր, որովհետև վերջինս նույնպես մինչ այդ գրված բազմաթիվ ստեղծագործություններում անդրադարձել էր և՛ Մաշտոցի կերպարին, և՛ V դ. բախտորոշ իրադարձություններին:

Այժմ հնարավոր բանավեճի մասին: Եթե «Եվ այր մի՛ Մաշտոց անուն...» պոեմը թվագրված չլիներ 1962 թ. փետրվար, այսինքն՝ Շիրազի պոեմի տպագրությունից մոտ երկու ամիս առաջ, այլ հակառակը, միանշանակ կարելի էր պնդել, որ Սևակը, ծանոթանալով ավագ գործընկերոջ երկին, ներքին անբավարարվածություն է զգացել և որոշել է սկզբունքային բանավեճ մղել՝ գրելով Մաշտոցին նվիրված մի նոր պոեմ: Սակայն իրեն բնորոշ նրբանկատությամբ, ավագ գրչակցին չվիրավորելու նպատակով (չմոռանանք, որ «Հայոց հրաշքը», հիրավի, մեծ շնչով գրված քերթվածք է և արժանի ավանդ հայ պատմահայրենասիրական քնարերգության ընտրանուն) Սևակը չի դիմել բացահայտ հոդվածային բանավեճի, այլ գրել է իր պոեմը:

Այսպես. Սևակի պոեմի առաջին տողերն ամբողջությամբ (ինչպես և շատ այլ հատվածներ) բառիս բուն իմաստով հայ ժողովրդի մինչմաշտոցյան շրջանի հոգևոր կուտակումների փառաբանումն են, որոնցում ասես մերժվում-հերքվում է «քարանձավաբնակ վայրի ցեղի» անընդունելի գաղափարը.

*Մենք կայինք նաև Նրանի՛ց առաջ,
Եվ դարե՛ր առաջ...
... Լեռը ծակելով՝
Մենք նրա միջով ջուր էինք տանում ...
... Իսկ ամուլ կավին տալիս էինք մենք
Ձևը վարսանդի
Եվ կոչում կարաս ...
... Մենք համառ ոսկուն ստիպում էինք նաև մայրանալ՝
Դառնալ դիցուհու արձան անթերի,
Եվ այդ հյությունն անձնատուր ոսկու
Անվանում էինք Մայր զգաստությանց՝ Մեծըն Անահիտ ...
... Մուշեղները մեր*

Օտար գործությանն ընդդիմանալիս
 Նրանց հարեմը գերի առնելով
 Ու ձեռք չտալով և ոչ մի կնոջ՝
 Առնականության և վեհանձնության դաս էին տալիս ...
 ... Տաճարից ելնում ու թատրոն գնում,
 Վայելում նաև հաճույքը վսեմ
 Մեր այն պարուհի-կաքավողների,
 Որոնց մարմինը նվագ էր լռած
 Եվ որոնք նաև «երգեին ձեռամբ» ... (243 – 245):

Այս տողերից շատերը մի քանի անգամ կրկնվում են նաև ստեղծագործության տարբեր հատվածներում՝ հատուկ ընդգծելով, որ ինքնուրույն դիմագիծ ունեցող ժամանակի քաղաքակիրթ ազգերի հետ համընթաց քայլող, մշակութային բարձր արժեքներ ստեղծած մի ժողովրդի մասին է խոսքը: Եվ հենց այդպիսի ձեռքբերումներ ունեցող ժողովրդի համար կարող էր արդեն հրամայական անհրաժեշտություն դառնալ նաև հերթական քայլը՝ սեփական գրերի ստեղծումը:

Մեջբերված տողերը քաղված են պոեմի Ա գլխից: Հաջորդ հինգ գլուխներում հեղինակը հիմնավորում է հատկապես այդ պահին սեփական գրեր ունենալու ծայրահեղ անհրաժեշտությունը նաև երկրի քաղաքական զարգացման և ժողովրդի գոյատևման տեսակետից: Այդպիսի հատվածները երկի գաղափարական բարձրակետերն են՝ միտված որոշակի համեմատություն անցկացնելու մեսրոպյան դարաշրջանի և ներկայի միջև: Անցյալի պատմական փաստերի լուսաբանման կեղևի տակ փոխաբերական պատկերներ են, որոնք նույնքան բնորոշ էին նաև խորհրդային տարիների հայ իրականությանը.

Իսկ իսկություններ ...
 Հավասարության ու եղբայրության ազնիվ քարոզով
 Ուրիշի տուն ու երկիր էր մտնում
 Օտար վարք ու բարք,
 Օտար ծես ու կարգ:
 Իսկ իսկություն չէ՞,
 Որ գորքից հետո
 Միշտ էլ լեզուն են մարտադաշտ հանում,
 Եվ ինչ չի կարող ո՛չ մի գորք անել՝
 Լեզուն է անում (251):

Այս պայմաններում, Սևակի կարծիքով, հարագատ ժողովրդին օգնելու ցանկությունը, հայրենասիրությունը քիչ են. պետք է գտնել փրկության *հնարք*՝ ամենահատուկ *զենքը*: Իսկ դրա համար ամենից առաջ պետք է լինել մեծ քաղաքագետ: Դժվար չէ նկատել, որ այս անգամ էլ Սևակը լուր բանավեճի մեջ է Շիրազի այն տեսակետի հետ, թե գրերի գյուտն ամբողջությամբ և Մեսրոպ Մաշտոցն ինքը *հրաշք են* (պատահական չէ, որ Շիրազի պոեմը հենց այդպես էլ կոչվում է՝ «Հայոց հրաշքը»): Ահա այդ մտքի հակադրությունը.

*Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի
Եվ հետո մարդկանց դարեր շարունակ զարմանք պատճառում,
Բայց Նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լոկ այն պատճառով,
Որ անչափ շատ են սպասել նրանց...
... Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե **հրաշք** չկա (ընդգծումը իմն է՝ Տ-Մ. Ա.),
Կա միայն կարիք:
Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամեն մի հնար ... (255 – 256):*

Թվում է՝ այսքան ակներև հակադրությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ «Հայոց հրաշքը» իրոք գրվել է «Եվ այր մի՝ Մաշտոց անուն...» պոեմից մեկ կամ մի քանի ամիս առաջ, այսինքն՝ 1961-ի վերջին կամ 1962-ի սկզբին: Մակայն Սևակի աշխատություններից առնվազն երկուսը՝ «Դիմանկարի ամբողջացման համար» և «Թրի դեմ՝ գրիչ» հոդվածները, հիմք են տալիս կասկածելու նաև այս ամսաթվերին: Բանն այն է, որ «Մենք կայինք նաև նրանից առաջ...» բանաստեղծական կառույցի արձակ տարբերակը Սևակն օգտագործել է ավելի վաղ՝ 1961-ի սեպտեմբերին, Կոմիտասի մասին գրված վերոհիշյալ հոդվածում. «Մաշտոցից առաջ էլ կար հայոց լեզու՝ իր հնչյունական համակարգով ու քերականությամբ: Բայց այդ համակարգը տարաբաժանելու և վերամիավորելու, այդ քերականության օրենքները ճանաչելու և սահմանելու համար հարկավոր էր հանձարեղ լինել ...

... Կոմիտասից առաջ էլ կար հայ երգ ու նվագ, հայն ուներ իր երգային համակարգն ու երաժշտական «քերականությունը»: Բայց այդ համակարգը տարբերելու և համադրելու, այդ «քերականությունը» ուսումնասիրելու և օրինավորելու համար հարկավոր էր հանձարեղ լինել»⁶:

Եթե այս տողերը ընդունենք որպես ենթադրյալ բանավեճի նախնական տարբերակ, ապա ստիպված ենք ենթադրել, որ «Հայոց հրաշքը» (դարձյալ կրկնենք՝ գուցե ոչ ամբողջովին) գրվել է և Սևակին ծանոթ է եղել նույնիսկ 1961-ի սեպտեմբերից էլ առաջ: Մա այն դեպքում, եթե, իրոք, գոյություն է ունեցել մեր ենթադրած բանավեճը: Մյուս կողմից, բանավեճի բացակայության դեպքում հազիվ թե Սևակը տարբեր աշխատություններում գրեթե բառացի շարադրեր նույն միտքը: Ահավասիկ «Թրի դեմ՝ գրիչ» աշխատության նույնատիպ հատվածը, ուր Սևակը ևս մեկ անգամ ընդգծում է իր անհամաձայնությունը Մաշտոցի գործը **հրաշք** համարողների հետ. «Որտեղի՞ց եկավ, ինչպե՞ս, ի՞նչ **հրաշքով** ծնվեց (Մեսրոպ Մաշտոցը՝ Տ-Մ.Ա.) ,– ահավասիկ ևս մի հարց, որ այն ժամանակ չէր տրվում, բայց

⁶ Նույն տեղում , հ. 5, էջ 131 -132:

կրկնվեց ու կրկնվում է արդեն 1600 տարի: Ինչպե՞ս, ի՞նչ **հրաշքով** ծնվեց» (ընդգծումներն իմն են՝ S-Մ. Ա.)⁷:

Ասփոփելով նշենք, որ ամենևին նպատակ չունենալով հակադրել երկու հանձարեղ բանաստեղծներին՝ պարզապես փորձել ենք ուշադրություն հրավիրել նրանց աշխարհայացքային տարբերությունների վրա և դրանից բխող հավանական մի բանավեճի, որի գոյության ընդունումը կամ բացառումը թողնում ենք ուսումնասիրողներին:

**МИРОВОЗЗРЕНЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПОЭМ
О. ШИРАЗА И П. СЕВАКА, ПОСВЯЩЕННЫХ М. МАШТОЦУ**

ТЕР-МИНАСЯН А. А.

Резюме

В 1962 году в дни празднования 1600-летия со дня рождения М. Маштоца были опубликованы поэмы О. Шираза „Армянское чудо” и П. Севака „И муж один по имени Маштоц...”. Наряду с общими чертами, диктуемыми темой, в этих произведениях есть существенные мировоззренческие отличия.

1. О. Шираз полагает, что до создания письменности армянский народ представлял собой „пещерное”, „дикое” племя. По мнению же П. Севака, армянский народ и до Маштоца был известен миру своей самобытной культурой и богатым духовным наследием, и именно в силу этих причин в пятом веке возникла необходимость иметь и собственные письмена.

2. Согласно О. Ширазу, создание письменности и образ самого М. Маштоца является „чудом”, и не случайно его поэма носит название „Армянское чудо”.

Словно полемизируя с О. Ширазом, Севак утверждает, что это не чудо, а „потребность”, продиктованная исторической „необходимостью”.

⁷ Նույն տեղում, էջ 174 – 175: